ԱՐԴ/0605/02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18 հունվարի 2023 թվական ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության ընդդեմ Գարիկ Սաշիկի Մկրտչյանի՝ անշարժ գույքի վրա կիրառված արգելանքները վերացնելու և գույքի առուվաճառքի պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջի մասին, գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին ՀՀ սնանկության դատարանի 2023 թվականի հունվարի 5-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Հայցվոր) 2022 թվականի փետրվարի 2-ին հայցադիմում է ներկայացրել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Գարիկ Սաշիկի Մկրտչյանի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Ակնալիճ համայնք, Արագածոտն փողոց, թիվ 51 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա կիրառված արգելանքները վերացնելու և գույքի առուվաճառքի պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

2. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

3. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ քաղաքացիական գործը հանձնվել է ՀՀ սնանկության դատարանի քննությանը:

4. Սնանկության դատարանի՝ 2023 թվականի հունվարի 5-ի որոշմամբ քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու նպատակով գործն ուղարկվել է Վճռաբեկ դատարանի նախագահին:

5. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի հունվարի 11-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. 2022 թվականի փետրվարի 2-ին դիմելով դատարան՝ Հայցվորը պահանջել է վերացնել ՀՀ, Արմավիրի մարզ, Ակնալիճ համայնք, Արագածոտն փողոց, թիվ 51 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա կիրառված արգելանքները և պարտավորեցնել Պատասխանողին կնքել գույքի առուվաճառքի պայմանագիր[1]:

7. Թիվ ԱՐԴ/0055/04/16 սնանկության գործով Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 13-ի վճռով Գոռ Աբրահամյանը սնանկ է ճանաչվել: Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հունվարի 26-ի որոշմամբ Գոռ Աբրահամյանի սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Գարիկ Մկրտչյանը: Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ հաստատվել է Գոռ Աբրահամյանի սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը, որում ընդգրկվել է նաև Հայցվորի՝ 14.087.288,29 ՀՀ դրամի չափով ապահովված պահանջը: Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 23-ի որոշմամբ թույլատրվել է Գոռ Աբրահամյանի սնանկության գործով կառավարիչ Գարիկ Մկրտչյանին իրականացնել Գոռ Աբրահամյանի պարտավորությունների կատարման ապահովման համար գրավադրված

[1] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթեր 3-13:

անշարժ գույքի՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Ակնալիճ համայնք, Արագածոտն փողոց, թիվ 51 հասցեում գտնվող բնակելի տան հրապարակային սակարկություններով վաճառքը[2]:

8. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 25-րդ հոդվածի 3-րդ մասին, 167-րդ հոդվածի 5-րդ մասին, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին, 31-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասին և 41-րդ հոդվածին՝ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկել է Սնանկության դատարան՝ նշելով հետևյալը. *«(…) [Ս]ույն քաղաքացիական գործով վիճելի գույքը սնանկության գործով պարտապան Գոո Աբրահամյանի գույքի կազմում ներառված գույք է, ուստի վեճը պետք է քննվի սնանկության գործը վարող դատավորի կողմից (…)»*[3]:

9. Հղում կատարելով մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասին, ինչպես նաև 2020 թվականի ապրիլի 15-ից հետո գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին, Սնանկության դատարանը 2023 թվականի հունվարի 5-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(…) Դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով ծագած վեճը չի կարող ազդեցություն ունենալ սնանկության դատարանում հարուցված և վարվող թիվ ԱՐԴ/0055/04/16 սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա, քանի որ այն վերաբերում է սնանկության գործի շրջանակներում դատարանի որոշման հիման վրա իրականացված աճուրդի արդյունքներով սնանկության կառավարչին առուվաճառքի պայմանագիր կնքել պարտավորեցնելուն: (…) Դատարանը գտնում է, որ մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նույնպես սույն քաղաքացիական գործը ենթակա չէ քննության թիվ ԱՐԴ/0055/04/16 սնանկության գործի շրջանակում, քանի որ քաղաքացիական գործով*

---

[2] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթեր 16-23, ինչպես նաև www.datalex.am տեղեկատվական համակարգը՝ գործ թիվ ԱՐԴ/0055/04/16:

[3] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթեր 98-99:

վեճի առարկա հանդիսացող գույքն այլևս չի հանդիսանում թիվ ԱՐԴ/0055/04/16 սնանկության գործով պարտապան Գոռ Աբրահամյանին պատկանող գույքի կազմում ներառված գույք, ինչպես նաև պարտապան Գոռ Աբրահամյանը սույն քաղաքացիական գործով ներկայացված հայցով ներգրավված չէ որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ»[4]*:*

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *առկա են արդյո՞ք «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նախապայմանները՝ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության հայցադիմումի հիման վրա թիվ ԱՐԴ/0605/02/22 քաղաքացիական գործը Սնանկության դատարանի կողմից քննության առնելու համար*:

11. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում»:*

Մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ. *«Սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում»:*

2020 թվականի ապրիլի 15-ին ուժի մեջ մտած՝ ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ

[4] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթեր 105-108:

ՀՕ-294-Ն ՀՀ օրենքով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգավորումը վերանայվել է և նույն հոդվածի 3-րդ մասում սահմանվել է հետևյալ կարգավորումը. «*Մնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործեր*»:

12. Սույն որոշման նախորդ կետում վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական գործերը, որպես կանոն, ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում: Այս ընդհանուր կանոնից բացառություն է սահմանված սնանկության գործերի համար, որոնց վարումն իրականացնում է Մնանկության դատարանը: Մնանկության դատարանը միաժամանակ իրականացնում է նաև սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդեցություն ունեցող այն քաղաքացիաիրավական վեճերի քննությունը, որոնք համապատասխանում են «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նախապայմաններին:

Գործող խմբագրությամբ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական գործը ենթակա է քննության սնանկության դատարանում, սնանկության գործը վարող դատավորի կողմից, նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործ՝ հետևյալ նախապայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) քաղաքացիաիրավական վեճը պետք է ծագած լինի «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված օբյեկտներից որևէ մեկի առնչությամբ,

բ) վեճի լուծումը պետք է ազդի պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա,

գ) սնանկության գործը պետք է գտնվի քննության փուլում, այսինքն՝ սնանկության գործի վարույթը պետք է ավարտված չլինի:

13. Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերությունը 2022 թվականի փետրվարի 2-ին հայցադիմում է ներկայացրել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Գարիկ Մկրտչյանի՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Ակնալիճ համայնք, Արագածոտն փողոց, թիվ 51 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա կիրառված արգելանքները վերացնելու և գույքի առուվաճառքի պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջի մասին[5], որը Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ ընդունվել է վարույթ[6],

- թիվ ԱՐԴ/0055/04/16 սնանկության գործով Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 13-ի վճռով Գոռ Աբրահամյանը սնանկ է ճանաչվել: Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հունվարի 26-ի որոշմամբ Գոռ Աբրահամյանի սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Գարիկ Մկրտչյանը: Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ հաստատվել է Գոռ Աբրահամյանի սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը, որում ընդգրկվել է նաև Հայցվորի՝ 14.087.288,29 ՀՀ դրամի չափով ապահովված պահանջը: Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 23-ի որոշմամբ թույլատրվել է Գոռ Աբրահամյանի սնանկության գործով կառավարիչ Գարիկ Մկրտչյանին իրականացնել Գոռ Աբրահամյանի պարտավորությունների կատարման ապահովման համար գրավադրված անշարժ գույքի՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Ակնալիճ համայնք, Արագածոտն փողոց, թիվ 51 հասցեում գտնվող բնակելի տան հրապարակային սակարկություններով վաճառքը[7],

- հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 25-րդ հոդվածի 3-րդ մասին, 167-րդ հոդվածի 5-րդ մասին, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին, 31-րդ հոդվածի 1-ին և 4-րդ

---

[5] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[6] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

մասերին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասին և 41-րդ հոդվածին, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկել է Սնանկության դատարան՝ նշելով, որ սույն քաղաքացիական գործով վիճելի գույքը սնանկության գործով պարտապան Գոռ Աբրահամյանի գույքի կազմում ներառված գույք է, ուստի վեճը պետք է քննվի սնանկության գործը վարող դատավորի կողմից[8],

- հղում կատարելով մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասին, ինչպես նաև 2020 թվականի ապրիլի 15-ից հետո գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին՝ Սնանկության դատարանը 2023 թվականի հունվարի 5-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ սույն քաղաքացիական գործով ծագած վեճը չի կարող ազդեցություն ունենալ սնանկության դատարանում հարուցված և վարվող թիվ ԱՐԴ/0055/04/16 սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա, քանի որ այն վերաբերում է սնանկության գործի շրջանակներում դատարանի որոշման հիման վրա իրականացված աճուրդի արդյունքներով սնանկության կառավարչին առուվաճառքի պայմանագիր կնքել պարտավորեցնելուն: Միաժամանակ Սնանկության դատարանը գտել է, որ մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նույնպես սույն քաղաքացիական գործը ենթակա չէ քննության թիվ ԱՐԴ/0055/04/16 սնանկության գործի շրջանակում, քանի որ քաղաքացիական գործով վեճի առարկա հանդիսացող գույքն այլևս չի հանդիսանում թիվ ԱՐԴ/0055/04/16 սնանկության գործով պարտապան Գոռ Աբրահամյանին պատկանող գույքի կազմում ներառված գույք, ինչպես նաև պարտապան Գոռ Աբրահամյանը սույն քաղաքացիական գործով ներկայացված հայցով ներգրավված չէ որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ[9]:

---

[8] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, նախևառաջ հարկ է նկատել, որ տվյալ դեպքում թիվ ԱՐԴ/0605/02/22 քաղաքացիական գործը հարուցվել է 2022 թվականի փետրվարի 2-ին, երբ արդեն իսկ գործել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքը՝ թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքով կատարված լրացումներով և փոփոխություններով խմբագրությամբ: Հետևաբար, սույն քաղաքացիական գործի ենթակայության հարցը որոշելիս կիրառելի են թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքով կատարված լրացումները և փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի դրույթները: Ուստի, Սնանկության դատարանի կողմից սույն գործի ենթակայությունը որոշելիս որպես հիմք ընդունված՝ մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառելի չէ:

Նման պայմաններում, քննարկման առարկա դարձնելով սույն որոշման 12-րդ կետում վերլուծված՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վավերապայմանների առկայության հարցը, պետք է փաստել, որ՝

ա) սույն քաղաքացիաիրավական վեճը ծագել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված օբյեկտի, այն է՝ սնանկ ճանաչված Գոռ Աբրահամյանի պարտավորությունների կատարման ապահովման համար գրավադրված անշարժ գույքի՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Ակնալիճ համայնք, Արագածոտն փողոց, թիվ 51 հասցեում գտնվող բնակելի տան առնչությամբ,

բ) սույն վեճի լուծումը ազդեցություն է ունենալու սնանկության վարույթի շրջանակներում Հայցվորի ապահովված պահանջի բավարարման հնարավորության վրա,

գ) թիվ ԱՐԴ/0055/04/16 սնանկության գործը գտնվում է քննության փուլում, այսինքն՝ սնանկության գործի վարույթը դեռևս ավարտված չէ:

15. Վերոգրյալի հիման վրա, գտնում եմ, որ առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նախապայմանները՝ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության հայցադիմումի հիման վրա թիվ ԱՐԴ/0605/02/22 քաղաքացիական գործը Սնանկության դատարանի կողմից քննության առնելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ԱՐԴ/0605/02/22 քաղաքացիական գործը՝ ըստ հայցի «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության ընդդեմ Գարիկ Սաշիկի Մկրտչյանի՝ անշարժ գույքի վրա կիրառված արգելանքները վերացնելու և գույքի առուվաճառքի պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ սնանկության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ